

ՎՐ-99

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՊԱՐՈՒՅՐԻ

ՔՅՈԹԱՀԻԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՅՈՒ  
«ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ» ԻԲՐԵՎ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ  
XV-XVIII ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Է. 00.02

Ընդհանուր պատմություն մասնագիտությամբ

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսությամբ  
սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 1997

Արևելաօգիտության ինստիտուտի գրադարանի ՁՅ պրակ:  
Ա. Մուրադյան

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ


Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր Վ. Բ. ԲԱՐՔՈՒԴԱՐՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու  
Գ. Հ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական հա-  
մալսարանի պատմության ֆակուլտետի Ընդհանուր պատմու-  
թյան ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 1997 թ. Մայիսի 26 -ին  
ժ. 14-18 ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական  
աստիճաններ շնորհող պատմության բնագավառի 006 մասնա-  
գիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ  
Բաղրամյանի պող. 24գ.)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևե-  
լագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 1997 թ. ապրիլի 25 -ին

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու 

Աշխատության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսական հետազոտությունը վերաբերում է  
Փոքր Ասիայի արևմտյան հատվածի առևտրա-արհեստավորա-  
կան նշանակալի կենտրոններից մեկի՝ Զյոթահիայի հայկա-  
կան համայնքի պատմության խնդիրներին: XVI-XVIII դարերի  
ընթացքում տեղի ս. Աստվածածին եկեղեցում կազմավորվել է  
«Քիւթիւկ» անունը կրող վավերագրերի ու հիշատակարան-  
հիշատակագրությունների գրչագիր ժողովածուն, ուր ամփոփ-  
ված տեղեկությունների թեմատիկ դասդասման, խմբավորման,  
պատմական ետնախորքի վրա կատարված գիտական դիտար-  
կումների ու քննարկումների, ինչպես նաև համեմատական վեր-  
լուծությունների և հայկական ու օտարալեզու աղբյուրների  
հետ համադրումների ճանապարհով հետազոտվում են Զյոթա-  
հիայում հայկական համայնքի հաստատման ժամանակա-  
շրջանի ու փուլերի, նրա համալրման աղբյուրների, ներհա-  
մայնքային ինքնակառավարման ձևերի, զբաղմունքի, իրավա-  
կան կացության, առևտրա-տնտեսական, քաղաքական, հո-  
գևոր ու շինարարական գործունեության շրջանակների, պե-  
տության և համայնքի, նաև միջլեռնիկական փոխհարաբերու-  
թյունների բազմաբնույթ խնդիրներ:

«Հիշատակարանի» (նախընտրելի ենք նկատել «Քիւթիւ-  
կիւն» տալ այս վերտառությունը) բնագրագիտական և վավե-  
րագրագիտական ուսումնասիրման ու բնութագրումների շնոր-  
հիվ հստակեցվում են հուշարձանի կազմման ու կրած «վերա-  
նորոգումների» հիմնական ժամանակաշրջանները, ճշտվում է  
նրանում գրառումներ կատարած հեղինակներից շատերի ինք-  
նությունը, սահմանվում-շտկվում են գրիչներին պատկանող  
հատվածներն ու պատանիները, ըստ հարկի բացահայտվում  
նրանց կողմից օգտագործած աղբյուրները և այլն:

Աշխատության մեջ փորձ է արվում նաև Օսմանյան  
կայսրության պետա-հասարակական համակարգում քրիստոնե-  
յա եկեղեցուն վերապահված դատա-իրավական, վարչա-կառա-  
վարչական ու հարկա-տնտեսային իրավասությունների շրջա-  
նակներում հետևել հայոց ս. Աստվածածին եկեղեցու կողմից  
սեփականության ձեռքբերմանը, գույքային ունեցվածքի աս-  
տիճանական կուտակման ընթացքին, ինչպես նաև առևտրա-

տնտեսական գործունեության ծավալմանն ու ներհամայնքային կյանքի կազմակերպման ընթացքին:

Կուտի նահալության պատմության առանձին դրվագների վերհանումից բացի, սկզբնաղբյուրը հարուստ նյութ է պարունակում նաև Օսմանյան կայսրության միջին դարերի պատմության՝ արտաքին քաղաքական հարաբերությունների ու ներպետական խնդիրների ուսումնասիրման առումով: Այս կարգի նյութը գիտական շրջանառության մեջ ներառելու և պատմական իրադարձության ծալքերը դիտարկելու և քննության նոր մոտեցումներ մշակելու միջոցով մի խումբ հարցեր ստանում են իրենց նորովի լուսաբանումը:

### Նպատակն ու խնդիրները

Հարցերի շրջանակի վերը բերված մասնավորեցումները ինքնին ուրվագծում են ատենախոսական աշխատության նպատակը, որն է կուտի նահալության շուրջ չորս հարյուրամյա պատմության պատկերումը, ըստ անցուդարձերին ժամանակակից ու մասնակից հեղինակների գրառումների: Առհասարակ Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան հատվածների հայկական բնակավայրերի պատմությունը հայագիտության և արևելագիտության սակավ ուսումնասիրված բնագավառներից է (խոսքը վերաբերում է թե՛ Բյուզանդական և թե՛ Օսմանյան կայսրության շրջաններին): Փաստորեն միայն երախտաշատ Ա. Ալպոյաճյանն է փորձել մենագրորեն անդրադառնալ առանձին բնակավայրերի անցյալին (հատկապես Կեսարիային և մասամբ նաև Զյոթահիային): «Հիշատակարանը» հրատարակելու առիթով Ն. Զորթյանի կատարած դիտարկումները ավելի մերօրյա հուշագրական նոթեր են, քան բնակավայրի պատմությունն արծարծելու փորձ:

### Մեթոդական հիմքը

Սկզբնաղբյուր ուսումնասիրելու հիմնական մեթոդը, բնագրագիտական քննությունից բացի, այլ աղբյուրների տեղեկությունների համադրմամբ առկա հաղորդումների ստուգության աստիճանի պարզումն ու նրա աղբյուրագիտական գնահատումն է: «Զիթիկ» կամ «Զեթուկ» կոչվող ժողովածուները ունեն նյութի գրառման ու գրչության բազմաթիվ

ինքնատիպություններ, որոնք միայն վերջին տարիներին ևն սկսում հետաքրքրության առարկա դառնալ (նկատի ունենք արևելագետներ Ն. Փափազյանի և Պ. Մուրադյանի հոդված-հրատարակումները): Մեր հետազոտությունը գերզանցապես համեմատական-համադրական վերլուծություն է և միաժամանակ՝ բնագրի հավելվածական ամբողջական թարգմանությանը այն աղբյուրագիտորեն իմաստավորելու, կիրառական-գործնական շրջանակն ընդլայնելու ձեռնարկում է:

### Աշխատանքի պաշտոնական արժեքավորումը

Ատենախոսությունը մասնագիտական քննարկման է ենթարկվել ՀՀ ԳԱԱ-ի Արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտության և Զրիստոնյա Արևելք խմբերի համատեղ նիստում: Աշխատության առանձին դրվագներ հրատարակվել են «Պատմա-բանասիրական հանդես» և «Լրաբեր հասարակական գիտությունների» գիտական պարբերականներում: Ատենախոսը Արևելագիտության և Պատմության ինստիտուտներում կազմակերպված գիտական նստաշրջաններում հանդես է եկել սույն հուշարձանին վերաբերող գեկուցումներով, հրատարակելով հիմնական գրությունները:

### Գիտական նորույթը

Զյոթահիայի «Հիշատակարանը» Օսմանյան կայսրության կազմում ձևավորված հայկական համայնքի կենսագործունեության խնդիրներին վերաբերող անցուդարձերի պատկերում է: Նրանում առկա գրառումների քննությամբ լուսաբանվում են քաղաքի հայ ազգաբնակչության աստիճանական հաստատման, համայնքի կազմավորման, նրա համալրման աղբյուրների ու ներհամայնքային կացության, տնտեսական, հոգևոր և շինարարական կյանքի հետ առնչվող բազմապիսի եղելություններ: Օսմանյան կայսրության վարչական, տնտեսական ու քաղաքական պատմության առանձնահատկությունների վերհանումը պայմանավորում է այլեթնիկ բնակչության, մասնավորապես հայոց սոցիալ-իրավական վիճակի համակողմանի պարզաբանում: «Հիշատակարանի» մի շարք վկայությունների աղբյուրագիտական վերլուծությունն ու նրանց համադրումը թուրքական աղբյուրների հաղորդումներին հա-

վաստում են ուսումնասիրվող հուշարձանի ակնհայտ առավելությունը:

#### Ատենախոսության կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից: Իբրև հավելված նրան կցված է բնագրի ռուսերեն ամբողջական թարգմանություն՝ համապատասխան տերմինաբանական բառարանով և անհրաժեշտ ծանոթագրություններով:

#### Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածություն. Կրոնա-ժեսական և պատմա-գրական երկասիրություններով հարուստ հայոց միջնադարյան մատենագրությունը XIV-XV դդ. սկսած համալրվեց «Քիւթիկ» կոչվող պատմա-վավերագրական բնույթի նոր տիպի հուշարձաններով:

Այսօրինակ ժողովածուների կազմման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես եկեղեցա-համայնքային, վարչական, դատա-իրավական և հարկա-տնտեսական ֆոխհարաբերությունները, այնպես էլ ունենցվածքային, շինարարական, այլև հոգևոր և աշխարհիկ գործունեության բազմապիսի խնդիրներ կարգավորող նյութերի և փաստաթղթերի պահպանման գործնական նպատակներով:

Իբրև ժամանակագրական տարբեր շրջանների եղելությունների գրառումներ ամփոփող ժողովածու միջնադարյան դպրության այս տիպը, թեև իր բնույթով տարատեսակ է և բազմաբովանդակ, բայց թեմատիկորեն միաբնույթ և հաջորդական տեքստերի միահավաք ամբողջականությամբ է արժևորում պարունակվող նյութի պատմական կարևորությունը:

Նորակազմ այս ժողովածուների բնագրային առանձնահատկություններն ու բարդությունները պահանջում են հետազոտման մեթոդական միանգամայն այլ սկզբունքների կիրառում, քան հեղինակային ամբողջական հուշարձանի հետազոտման պարագայում:

«Քիւթիկ-Տիշատակարաններում» գետեղված փաստաթղթերի, վկայությունների, մեկնությունների, հիշատակա-

գրերի, նվիրատուների ցուցակների և այլ նյութերի վերլուծությունն ու համադրումը մի շարք դեպքերում հնարավոր է դարձնում տվյալ համայնքի կամ վարչական միավորի պատմության հետազոտվող ժամանակահատվածի առավել հանգուցային խնդիրների բացահատումն ու պարզաբանումը:

Քյոթահիայի «Տիշատակարանը» տակավին բնագրագիտական ու աղբյուրագիտական համակողմանի ուսումնասիրման չի արժանացել, իսկ նրա միակ հրատարակությունը բնավ բնական չէ: Տրատարակիչը (Տ. Պ. Ջորթյան) դժվարացել է հոգալ նույնիսկ բնագրի մեթոդային տրոհումը, ուստի պահպանվել է միջնադարյան նորմը: Միակ հեղինակը, որը հուշարձանի բովանդակած նյութերի համեմատական վերլուծության և հայերեն ու օտարալեզու աղբյուրների հետ մասնակի համադրմամբ փորձում է վեր հանել Քյոթահիայի գաղթահայության շարունակական պատմությունը՝ Ա. Ալպոյաճյանն է<sup>1</sup>: Քյոթահիայի հայկական համայնքի ու նրա պատմության ուսումնասիրման խնդրում իր նկատելի վաստակն ունի «Տիշատակարանի» հրատարակիչ Տ. Պ. Ջորթյանը՝ նախ այդ իսկ հրատարակության փաստով, ապա և «Կուտինայի գաւառն ու հայերը» կոչվող՝ աշխատության պատրաստմամբ<sup>2</sup>: «Տիշատակարանի» և նրա XVIII դարի դրվագի հեղինակ Անտոն Կուտինացու մասին կարճառոտ, բայց հետազոտողի ուշադրությանն արժանի տեղեկություններ է հազորդում անվանի մատենագետ Տ. Անասյանը<sup>3</sup>:

Կուտինահայության պատմության առանձին հարցեր բննարկելիս քաղաքի աշխարհագրական դիրքի նկարագրման, տեղի ազգաբնակչության սովորույթների ու ավանդույթների, պատմա-ճարտարապետական հուշարձանների, պաշտպանական կառույցների ու բնական ամրությունների մասին տեղեկություններ ենք գտնում XVII դարի նշանավոր ճանապարհորդ

<sup>1</sup> Ալպոյաճեան Ա., Յուշամատեն Կուտինահայերու, Պէյրուք, 1960:

<sup>2</sup> Կուտինահայ ժամանակագրութիւն, հրատարակեց Տ. Պ. Ջորթեան, Վիեննա, 1960, էջ 1:

<sup>3</sup> Անասյան Տ. Ա., Տայիկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. 1, Երևան, 1959, էջ 973-974:

էվլիա Չելեբու<sup>4</sup>, XIX դարում քաղաքս այցելած Ջոն Կիննէրի<sup>5</sup> ու մանավանդ Ներսես Սարգիսյանի<sup>6</sup> գրառումներում: Առանձին գրքով Զյոթախիայի պատմությունն ուսումնասիրել է թուրք պատմաբան Ի. Ուզունչարշըլըն<sup>7</sup>, որը, սակայն, նույնիսկ չի արձանագրում կուտինահայերի գոյության փաստը: Թիչ չեն նաև Զյոթախիայում ձենապակեգործության ծագման և զարգացման խնդիրներ քննարկող հողված-հաղորդումները, որոնք, սակայն, մեր արծարծած խնդիրների պարագայում կրում են օժանդակ բնույթ:

#### Գլուխ Ա.

##### «Տիշատակարանի» բնագրագիտական բնութագրումը

##### Տուշարձանի բնութագրումը

Ատենախոսության այս գլուխը գերազանցապես նվիրված է «Տիշատակարանի» (Թիթիկի) աղբյուրագիտական բնութագրման ու բնագրագիտական արժեքման խնդիրներին: Առկա նյութերի վերլուծությունն ու այլ վկայությունների հետ անցկացրած համեմատությունները ցույց են տալիս, որ հիշատակագրքի հրատարակությամբ հայտնի օրինակը նախաբնագրի (գաղափար օրինակի) մի հատվածն է: Սկզբնագիրը երեք առանձին դրվագներից է բաղկացած եղել<sup>8</sup>, մինչդեռ տպագիր օրինակն այժմ ներկայացված է նրա միայն երկրորդ մասով, որը «բովանդակել գյիշատակս ինչ-ինչ քաղաքական դիպուածոց, գգործողութեանց և զպատերազմաց թագաւորացն Տաճկաց անդստին նախ քան զառումն Կ. Պօլսոյ, որպէս և զշինութեանց և զաւերացն եկեղեցեացս, ըստ այլ և այլ ժամանակացն և զիպուածոց, նոյնպէս և ի նոսա յիշատակ երողացն

4 *اوليا جليبي، سياحتنامه سي، در سعادت، ۱۳۶۶-۱۳۶۷*

5 John Macdonald Kinner, *Voyage dans l'Asie Mineure, l'Arménie et le Kourdistan dans les années 1813 et 1814...* Traduit de l'Anglais par N. Perrin, t. 1, Paris, 1818, p. 356-357.

6 Տ. Ներսես վրդ. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 41-45:

7 İsmail Hakki, *Kütahya sehri*, İstanbul, 1932.

8 Կուտին. ժամ., էջ 91:

երկար շարս, եւ զինչ-ինչ ձառս զմտածական աղօթից»<sup>9</sup>, իսկ առաջին մասը՝ Սարգիս Շնորհալու «Կաթողիկէից մեկնութիւնն» ու երրորդը, որ «նուիրեալ է ի ձառս եւ ի քարօզ», ներկայացված չեն: Տուշարձանի մեծածավալ լինելու հանգամանքը մատնանշում է նաև ինքը հրատարակչը<sup>10</sup> և, հաշվի առնելով աղբյուրի հրատարակվող մասի բովանդակությունն ու նրանում արծարծված նյութերի շարադրաձևը, այն որակում է իբրև «Ժամանակագրութիւն»:

Պահպանված նյութերի բնագրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ «Տիշատակարանը», առավել ևս նրանում եղած տեքստերը, քանիցս ենթարկվել է ընդօրինակումների: Ընդ որում վերջիններս պայմանավորված են եղել մերթ վերախմբագրման հանգամանքով, մերթ՝ ամբողջական գրվածքը կորստից փրկելու հոգածությամբ:

«Տիշատակարանի» պահպանման գործում առավել նշանակալի է Վահրամ արքեպ. Մանկունու դերը, որը 1881 թ. սեփական նախաձեռնությամբ ձեռնասուլի է եղել նրա ընդօրինակման աշխատանքներին, դրանով իսկ փրկելով այն կորստից: Ընդօրինակման աշխատանքներն ընթացել են երկու փուլով՝ «1881 դեկտ. 8»-ին ավարտվել է պատմական մասի արտագրումը (որը ներկայացվել է կաթողիկոս Գևորգ IV-ին)<sup>11</sup>, ապա «յամին 1882 մարտ 20»-ին «օրինակեցաւ» նաև վերջնամասը՝ «յիշատակ երողացն երկար շարս»: Կատարվել է երկու ընդօրինակում՝ մեկը կաթողիկոսի, իսկ մյուսը՝ աշխատասիրողի օգտագործման համար: Աղբյուրի ներկայիս հրատարակությունը կատարված է Վ. Մանկունու պատճենի հիմքի վրա:

##### Նկարագրությունը

Տուշարձանը ներկայանում է «Այս է կոնդակ սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ» վերնագրի տակ և սկսվում Աստվածամոր ներբողմամբ, ապա իրար են հաջորդում ժամանակագրական կարգով ներկայացված «Ճառերն» ու «Կոնդակ-

9 Նույն տեղում էջ 91:

10 Նույն տեղում էջ 1-7:

11 Տես նույն տեղում:

ներք)։ Ընդ որում՝ անռաջինները գերազանցապես վերաբերում են գաղթահայության պատմությանն առնչվող հարցերին, մինչդեռ երկրորդները շոշափում են Օսմանյան կայսրության ներպետական ու արտաքին քաղաքական խնդիրները։

Աղբյուրն ամփոփվում է նույն ժամանակահատվածում եկեղեցուն կատարված «Նուիրատուներու ցանկով»։

#### Աղբյուրները

«Տիշտակարանը» կազմելու ընթացքում հեղինակները, ինչպես և սպասելի էր, օգտվել են գրավոր և բանավոր մի շարք աղբյուրներից։ Նուշարձանի էջերում քանցս հղվում է Առաքել Դավրիժեցու «Գիրք Պատմութեանց» երկը, որտեղից մասնակի շեղումներով երբեմն մեջ են բերվում ամբողջական հատվածներ<sup>12</sup>։ Գրիչների պատկերացումներն ու աշխարհընկալման հիմունքներն են արտացոլում Ս. Գրքից կատարված քաղումներն ու շարադրանյութի հետ պարբերաբար անցկացվող համեմատականները<sup>13</sup>։

Ի հաստատումն սեփական խոսքերի հեղինակները հաճախակի վկայակոչում են նաև տվյալ անցքերի անմիջական մասնակիցներին ու ականատեսներին, որոնց վկայության ուղղակի մեջբերմամբ գրիչները ջանում են ձեռք բերել ընթերցողի վստահությունը մատուցվող նյութի իսկության նկատմամբ։

Ի դեպ, ճակատամարտի նկարագրության մի դրվագից երևում է, որ գրառողը ծանոթ է նաև Եղիշեի երկին, որի գրական ազդեցության հետքերը նկատելի են<sup>14</sup>։

<sup>12</sup> Կուտին. ժամ., էջ 16: Տմտ. Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց: Աշխատասիրությանը Լ. Ա. Խանյարյանի, Երևան, 1990, էջ 57: Կուտին. ժամ., էջ 20: Տմտ. Առաքել Դավրիժեցի, Գիրք ..., էջ 429: Կուտին. ժամ., էջ 24-25: Տմտ. Առաքել Դավրիժեցի, Գիրք ..., էջ 433:

<sup>13</sup> Կուտին. ժամ., էջ 8: Տմտ. Երգ Երգոց, Գլ. 2, 10: Կուտին. ժամ., էջ 27: Տմտ. Ժողովող, Գլ. Ժ, 16: Կուտին. ժամ., էջ 10: Տմտ. Մատթեոս, Գլ. Է, 17: Կուտին. ժամ., էջ 18: Տմտ. Մատթեոս, Գլ. ԻԵ, 34: Կուտին. ժամ., էջ 44: Տմտ. Թուրք Պողոսի առ Կողոթացիս Ա. Գլ. ԺԱ, 20-22 և այլն:

<sup>14</sup> Կուտին. ժամ., էջ 54: Տմտ. Եղիշե, Վասն Վարդանայ և Տայոց պատերազմին: Աշխատասիրութեամբ Ե. Տեր-Միանսեանի, Երևան, 1957, էջ 117 և շար.:

#### Կազմողները

Ժամանակագրական լայն շրջանակներ ընդգրկող սույն հուշարձանը (XV-XVIII դդ.) հեղինակային մի քանի սերունդների գործունեության արգասիք է։ «Տիշտակարանի» քանիցս կրած սրբագրումների ու խմբագրումների ընթացքում ունեցած փոփոխությունների, ինչպես նաև առանձին հատվածների հեղինակային հիշատակությունների բացակայության հետևանքով աղբյուրի կազմմանը մասնակցած գրիչների ամբողջական ու ճշգրիտ ցանկի վերականգնման հնարավորությունը նվազում է։ Բնագրում պահպանված հիշատակությունների և առանձին հատվածների վկայությունների քննությամբ մեծ մասամբ պարզվում և հաստատվում է տվյալ հատվածի հեղինակի, գրչի իսկությունը։

Ըստ այդմ «Տիշտակարանի» առաջին կազմողը Կոստանդին երեցն է, որը 1445 թ. «ԺԲ տանուտևոք» նախաձեռնեց այն։ Նյութի գրառման և շոշափվող հարցերի ժամանակային բնութագրումներից հետևում է, որ Կոստանդին երեցի գրչին պատկանող հնարավոր հատվածը «Տիշտակարանի» ներածական մասն է։ Թեև հիմնական տեքստում նրան հաջորդած հետագա անցքերի շարադրանքը վերաբերում է պատմական միևնույն ժամանակահատվածին, սակայն գրառված է XVII դ. ոչ վաղ (այդ են վկայում Ա. Դավրիժեցու «Գրքից» կատարված քաղումներն ու ջալալիների ապստամբության մասին ունեցած տեղեկությունները), մինչդեռ շարունակության մեջ կան ավելի վաղ շրջանի գրիչների կողմից արված նշումներ։

Այս և նույնանման մի շարք այլ հանգամանքներ հիմք են տալիս պնդելու, որ թեև հուշարձանը կառուցված է ժամանակագրական կարգով, այդ սկզբունքը, սակայն, հավասարապես կիրառելի չէ նաև հեղինակների ապրած ժամանակի բացահայտման խնդրում, քանզի միշտ չէ, որ գրիչը թղթին է հանձնել միայն իր ապրած շրջանի պատմությունը։ Ուստի թե՛ հեղինակների և թե՛ նրանց գրչին պատկանող հատվածների պարզորոշման հարցում հարկ է ոչ միայն շարժվել հեղինակներից դեպի նյութը, այլև կիրառել նաև հակառակ մոտեցումը։

Սկզբնաղբյուրը կազմողների շարքում իրեն անվանապես իբրև գրիչ հիշատակող հաջորդ անձը Տեր Աստվածա-

տուրն է, որը վկայում է 1669 թ. իր կողմից «պատուական եւ քառաթեւ սուրբ խաչի» կանգնման փաստը: Եկեղեցականի մահվան թվականից (1671) և նրան հաջորդած մի վկայությունից («Եւ սկսեցի վերստին նորոգել հանդերձ Պատմագրով»), ինչպես նաև «Տիշատակարանում» գետեղված մի շարք այլ նյութերի վերլուծականներից պարզվում է, որ Առաքել Դավրիժեցու «Գրքից» մեջբերումներ կատարողը նույն ինքը Տեր Աստվածատուրն է<sup>15</sup>: Այս իրողությունը նրան ներկայացնում է ոչ միայն իբրև առանձին հատվածի հեղինակ, այլև ամփոփ նյութի խմբագիր:

Ժողովածուի ամբողջական ընդօրինակողներից ու վերակազմողներից ամենահայտնին Անտոն Կուտինացին է, որի անվամբ էլ Քյոթահիայի «Տիշատակարանը» հայտնի է հայ մատենագիտության մեջ: Պահպանված ընդարձակ մի հատվածից իմացվում է, որ սկզբնագրի օրինակման աշխատանքներն սկսվել էին 1714 թ. Տեր Հարությունի և նրա եղբորորդի Տեր Անտոնի կողմից: Սակայն առաջինի մահվան պատճառով ընդօրինակումը ժամանակավորապես դադարել է և ավարտվել միայն «թվն. ՌՃԿԵ (1716)»: Անտոն Կուտինացու գրչին պատկանող հատվածը ընդգրկում է մոտավորապես 1680-ական թվականների դեպքերի շարադրանքից մինչև 1718 թ.:

1726 թ. ս. Աստվածածին եկեղեցուն բնական աղետից հասած վնասի հետևանքով «Տիշատակարանը» վերստին «շինելու եւ նորոգելու» խնդիր ներկայացավ, որի հերթական նախաձեռնողը եղավ Հարություն քահանան: Մասամբ շեղվելով ընդհանուր շարադրանքից և կատարվածի մասին իր խոսքը չափածո ներկայացնելուց հետո, նա հանգամանորեն անդրադառնում է մինչև XVIII դարի երեսունական թվականները Օսմանյան կայսրության պատմության մեջ տեղի ունեցած ներքաղաքական առավել խոշոր անցքերի ու իրադարձությունների շարադրմանն ու քննարկմանը:

Թեև սկզբնաղբյուրում ներկայացված հիմնական նյութը այս չորս հեղինակների շարադրանքով էլ ավարտվում է,

<sup>15</sup> Ա. Դավրիժեցու երկը ավարտված է համարվում 1662 թ., հետագայում ունենալով որոշ հեղինակային լրացումներ:

սակայն այն բովանդակում է նաև տեղի թեմի XIX դ. եկեղեցականներ՝ Գեորգ արքեպ. Պրուսացու և Հովսեփ վրդ. Պրուսացու կողմից համայնքի կյանքի կազմակերպման խնդիրներին վերաբերող մի քանի գրառումներ:

Անվանապես հիշատակված հեղինակներից բացի ժողովածուի էջերում իրենց մեծ ու փոքր նշումներն են կատարել մի շարք այլ գրիչներ, որոնց հիշատակումները, սակայն, մասնակի բնույթ են կրում և գերազանցապես առնչվում եկեղեցուն կատարած նվիրաբերությունների հետ:

#### Գլուխ Բ.

#### *Ա. Աստվածածին եկեղեցու «Տիշատակարանը» իբրև Քյոթահիայի հայ համայնքի պատմության աղբյուր*

Ատենախոսության այս բաժինը նվիրված է «Տիշատակարանում» պահպանված նյութերի համակողմանի քննության վրա կատարված Քյոթահիայի գաղթահայության սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի պատմության ուսումնասիրման խնդիրներին: Ազգային պետականության բացակայության պայմաններում, առավել ևս պատմական հայրենիքից դուրս գտնվող տարածքներում, հայերի էթնո-մշակութային ինքնության պահպանման միակ հաստատուն երաշխիքը հայոց եկեղեցին էր, որը և ըստ կարելույն պայմաններ էր ստեղծում տվյալ էթնոսոցիումի հասարակական-քաղաքական, առևտրա-տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի վարման համար:

Ատենախոսին զբաղեցնող էական խնդիրներն են համակայսերական կառավարման համակարգում քրիստոնյա եկեղեցու զբաղեցրած տեղը, եկեղեցի-պետություն և միջէթնիկական փոխհարաբերության ու փոխազդեցության շրջանակներն ու միջոցները, ինչպես նաև Քյոթահիայում հայ համայնքի ձևավորման ժամանակաշրջանի ու զարգացման էտապների, ներհամայնքային կառավարման ձևերի, սոցիալական վիճակի, մասնագիտական զբաղվածության, շինարարական և այլ բնույթի գործունեության հետ կապված բացմաթիվ հարցեր:

Տնարավոր է, որ Զյոթահիայում գաղթահայության հաստատման գործընթացը սկսվել էր դեռես XI դարում Բյուզանդական կայսրության օրոք, երբ հայ ժողովրդի զգալի զանգվածներ հարկադրական ուղղվեցին դեպի Փոքր Ասիայի արևմտյան շրջաններ: Այնուամենայնիվ՝ այդ հաստատող փաստական վկայություններ չկան:

«Տիշտակարանում» վկայվող 1445 թ. նշանակալի հող-հատկացումներով ու անշարժ գույքի նվիրաբերմամբ ա. Աստվածածին եկեղեցու շինարարության կազմակերպման իրողությունը, տեղի հոգևորականներ Կոստանդին ու Տիրատուր երեցների և առևտրական Վարդերի, ապա նաև «տասներկու տանուտերերի» մասնակցության փաստը թելադրում է, որ այդչափ գույքային ձեռքբերումներն ու կարողության կուտակումը, ինչպես նաև տանուտերերի ինստիտուտի գործառույթը, որը համայնքային ինքնակառավարման ձևավորում է նշանակում, պատմական որոշակի ժամանակահատված պահանջող գործոններ են: Հետևաբար, կուտինահայության համայնքային կազմավորման արմատները հարկ է փնտրել թերևս նախորդ դարի շրջանակներում: Ի հաստատումն առաջարկվող տեսակետի է խոսում նաև 1391 թ. Զյոթահիայում հայոց եկեղեցու գոյության փաստը, որին ոմն Անեցի Ռուզպակ նվիրաբերել է Սարգիս Շնորհալու «Կաթողիկոսի մեկնությունը»<sup>16</sup>: Գաղթօջախի երեք եկեղեցիների կառուցման մոտավոր թվականների ճշգրտման և թեմի առաջնորդ Նովակիս եպիսկոպոսի դիտապետության տարիներին (մինչև 1461 թ. Կ. Պոլսի պատրիարք նշանակվելը) նրանցից մեկի վերանորոգման մասին եղած վկայությունների<sup>17</sup> համեմատական վերլուծությամբ հաստատվում է, թե վերակառուցված եկեղեցին ա. Աստվածածինն է, ուստի նաև 1391թ. «Մեկնության» նրան նվիրաբերվելու տեղեկությունը իրապատում պիտի լինի:

<sup>16</sup> Մկրտիչ վրդ. Աղանունի, Զեօթահիոյ հին ձեռագրերը, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, թիւ 351, 1897:

<sup>17</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1900, էջ 2155: Մկրտիչ վրդ. Աղանունի, Կուտինայի նախկին առաջնորդները, «Բիւրակն», 20 յուրիս, Կ. Պոլիս, թիւ 25, 1900:

Օսմանյան իրականության մեջ փոխհարաբերությունների՝ իսլամի իրավունքի հիմքի վրա կատարվող կարգավորումն ու վերապահված իրավասությունների շրջանակներում այլադավան էթնիկ միավորների կրոնա-եկեղեցական կազմավորումների վարչա-տնտեսական և դատա-իրավական խնդիրների կառավարման իրավունքի արտոնագրումն ու պետական կարգավիճակի սահմանումը հնարավոր էր դարձնում այլ էթնիկ համայնքների էթնո-մշակութային կենսագործունեությունը, ազգային ինքնության պահպանումն ու արտադրա-առևտրական գործունեության զարգացումը:

«Տիշտակարանի» նյութերն ի հայտ են բերում եկեղեցա-համայնքային ինքնության ձևերի դրսևորման ամբողջական պատկերը՝ իբրև գործող եկեղեցի ունենալու հոգաբարձուների ձեռնարկումները, համատեղ գործողությունների շնորհիվ առանձին հողաբաժինների գնումներն ու նվիրաբերումները, միասնական առևտրա-տնտեսական գործունեության ծավալումը և այլն:

Տնտեսավարման առանձին սուբյեկտ լինելով, Զյոթահիայի ա. Աստվածածին եկեղեցին հանդես էր գալիս իբրև ավատատեր՝ անշարժ-և շարժական գույքի սեփականատեր: Աղբյուրից տեղեկանում ենք, որ 1714 թ. քաղաքի շուկայում բռնկված հրդեհից ամբողջությամբ այրվել էր նաև եկեղեցապատկան երեք խանութ, որոնք, ամենայն հավանականությամբ, վակֆային սեփականության վարձակալման պրակտիկայում կիրառվող կրկնակի ռենտայի իրավունքի (իշարեթեին) հիման վրա տրվել էին անհատ վաճառականների: Ա. Աստվածածնի առևտրա-տնտեսական գործառնությունների շրջանակների աստիճանական ընդարձակման խոսույն հանգամանքներից է «Տիշտակարանում» վկայվող պատահարից երկու տարի անց խանութների ցանցի ընդլայնման փաստը<sup>18</sup>, որոնց «օտապաշուրեան» իրավունքը «անօրինաց ձեռացն» «խալսելու» նպատակով, հանձնվել էր ոմն «տաճկի»: Առևտրա-տնտեսական գործունեության հետ համատեղ ա. Աստվածածին եկեղեցու եկամտի գոյացման աղբյուրներից էր նաև նրա սեփակա-

<sup>18</sup> Կուտին. ժամ., էջ 60:



նութուն հանդիսացող «հյուրասենյակների» վարձակալության հանձնման պրակտիկան:

Ի շարս պատմական բազմաթիվ այլ աղբյուրների, «Տիշատակարանի» նյութերում հերթական անգամ վկայվում է պետության կողմից կայսրության քրիստոնյա հպատակների (զիմմի) նկատմամբ վարվող տնտեսական շահագործման քաղաքականության, հարկահանման խնդիրներում անարդար միջոցների իրականացման, սոցիալ-իրավական ծանր կացության և ազգամիջյան հարաբերություններում մշտապես ցուցաբերվող ճնշումների ու կրոնական հետապնդումների հանգամանքը: Քաղաքի թուրքական բնակչությունը, հաճախակի անհիմն ու միտումնավոր կերպով, հայկական կողմին մեղադրանքներ էր ներկայացնում սեփականապատկան հողաբաժինների զավթման և նրանց օգտագործման ամբաստանությամբ, ինչը հաճախակի դառնում էր դատաքննության առանձին առարկա (ինչպես օրինակ աղբյուրում վկայված 1600, 1716 և 1738 թթ. միջադեպերի կապակցությամբ): Օրինկանության բնույթ ստացած դրամաշորթուները հերթական անգամ բնորոշում են Օսմանյան կայսրության տարածքում հայ բնակչության համար սահմանված իրավական կարգավիճակն ու բացահայտում ներհամայնքային ինքնակառավարման խնդիրներում պետական մարմիններից ունեցած կախվածության շրջանակները: Այդ են վկայում նաև 1726 թ. բնական աղետից ավերված ս. Աստվածածնի վերակառուցման գործնական իրականացմանն ուղղված մասնավոր նախաձեռնման առջև արհեստականորեն բարձրացված բարդություններն ու քաշքշուկը: «Աստծոյ տան» կառուցումը կամ նրա վերաշինումը, «Տիշատակարանի» վկայմամբ, նախատեսում էր բազմապիսի խոչնդոտներով պարուրված արարողակարգ՝ թաղամասի մահմեդական խորհրդի ավագանու կողմից նշված վայրում կանգուն եկեղեցի լինելու փաստի հավաստում, տեղի դադիի մասնակցությամբ չափումների հիման վրա ամրագրված և արքունիք հասցեագրված կառուցման իրավունք ստանալու խնդրագրի ներկայացում, ապա՝ սուլթանական հրովարտակով թուլլատրման իրավունքի ստացման պարագայում, հողաբաժինների հնարավոր խախտումների բացառման նպատակով քաղաքի իշխանու-

թյունների ներկայությամբ վերաշինված եկեղեցու կրկնակի չափումների անցկացում և միայն նոր օծման իրավունքի իրականացում:

Ընդհանրապես, երբ խոսքը վերաբերում է հայկական համայնքի կենսապայմաններին և վիճակին, աղբյուրն այն բնորոշում է իբրև «խեղձ», «անօգնական» և «տկար»:

«Տիշատակարանի» ավարտամասում գետեղված 1445-1731 թթ. ս. Աստվածածին եկեղեցու «Նուիրատուներու ցանկ»-ը, որը, դատելով ծանոթագրվող «եւ այլն», «երկար շարք մը աճեմներու», «նուիրատուներու շարք մը» դարձվածքներից ամբողջական չէ: Ցանկը առանձնակի կարևորություն է ներկայացնում ինչպես գաղթահայության մասնագիտական զբաղվածության, սոցիալական պատկանելիության, տնտեսական վիճակի, որտեղից եկվոր լինելու խնդրի պարզաբանման, այնպես էլ բուն եկեղեցու գույքային հարստության և ունեցվածքի շրջանակների պատկերացման առումներով:

Ս. Աստվածածին կատարված նվիրաբերումներն ամփոփելիս առանձնացվում են մի քանի հիմնական խմբեր.

- ա) Տամայնքային և մասնավոր տնօրինման տակ գտնվող հողաբաժիններից եկեղեցու օգտին տրվող հատկացումներ.
- բ) Եկեղեցու օգտագործմանը հանձնված խանութներ, արհեստանոցներ ու առանձին շինություններ.
- գ) Կրոնա-ծիսական բնույթի ձեռագիր և տպագիր բազմաթիվ գրվածքներ (Տիշատակարաններ, Գանձատետրեր, Տայսմավուրքներ, Ավետարաններ, Մաշտոցներ և այլն).
- դ) Սրբապատկերներ, խաչեր, դրամ, եկեղեցական հանդերձանք, թանկարժեք իրեր, զարդեղեն, սպասք և այլն:

Նվիրացուցակի կարևորությունը պայմանավորվում է նաև նվիրատուների ձշտման առումով՝ եկեղեցու սպասավորներ, հոգևորականության և եկեղեցու ծխականների հետ համատեղ ձեռնարկումներ, ամբողջական ընտանիքներ կամ նրանց առանձին անդամներ:

Ինչպես երևում է աղբյուրից, համայնքի անդամների եկեղեցանյաստ գործունեությունը արտահայտվում էր ոչ միայն «իրեղեն» նվիրաբերմամբ, այլև նրա օգտին որոշակի

աշխատանքների կատարմամբ և ծառայությունների մատուցմամբ:

«Ցուցակի» հաղորդած տվյալների հիման վրա ամբողջական է դառնում նաև նվիրատուների սոցիալական պատկանելիության և մասնագիտական զբաղվածության պատկերը. նրանք գերազանցապես քաղաքային բնակչության արհեստավորական և առևտրական դասի ներկայացուցիչներ են՝ **եափուճի** (շինարար), **չինչի** (հախճապակեգործ), **չանախչի** (բրուտ), **տիրկեր** (ատաղծագործ), **դուլումճու** (ոսկերիչ), **պեզազ** (կտավագործ), **սարաֆ** (դրամափոխ) և այլն: Նվիրատուներից 5 կրում են չեղերու, իսկ 20 խոջայի տիտղոսը: Նրանց են անդամակցում նաև սոցիալական այլ շերտերի ներկայացուցիչներ՝ **հեքիմներ** (բժիշկներ), **կեմճի** (նավաստի), **անգամ վեքիլ** (կառավարիչ):

Այս վկայությունների ընդհանուր դիտարկումը փաստում է տվյալ ժամանակահատվածում Քյոթահիայում սոցիալական առումով հայկական բազմաշերտ համայնքի գոյության հանգամանքը:

Նվիրատուներն ըստ բնակավայրի հիշատակվում են Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան հատվածից՝ Անկարա, Կեսարիա, Բրուսա, Բիլեջիկ, Սիվրիհիսար, Կարահիսար և այլն, ապա նաև Մեծ Տայքից՝ Դիարբեքիր, Վան, Մուշ, Խարբերդ, Երևան, Ջուղա, և Ծղնա: Ըստ թվային հաշվարկի գերակշիռ զանգվածը եկվորներ են Արևելյան Տայաստանի գավառներից (22 հոգի Ծղնայից, 18 բնութագրվում են իբրև «աջեմներ»), (իմա՝ պարսկահայեր, կան նաև ջուղայեցիներ): Սկզբնաղբյուրի այս հաղորդումների վերլուծությունը որոշակի լույս է սփռում Քյոթահիայի հայկական համայնքի համալրման աղբյուրի պարզման խնդրի վրա, որ դիտարկելի էր մասամբ նաև գոյություն ունեցող պատմական առանձին տվյալներով:

Նետագա տարիներին համայնքի «սնման» աղբյուրն ավելի ընդարձակվեց, մասնավորապես ներառելով Կիլիկիան ու հարակից երկրները:

### Գլուխ Գ.

*Օսմանյան կայսրության ուշ միջնադարյան պատմության հարցերի արտացոլումը «Տիշատակարանի» էջերում*

Իբրև աղբյուր Քյոթահիայի «Տիշատակարանը» նշանակալի գիտական հետաքրքրություն է ներկայացնում Օսմանյան կայսրության միջնադարյան պատմության բազմաթիվ խնդիրների արծարծման պարագայով: Նեղինակ-ժամանակագիրները, կայսրությանը վերաբերող նյութը ներկայացնելիս, երբեմն հաղորդում են առանձնակի կարևոր վկայություններ, որոնք միանգամայն նոր մոտեցումների, դիտարկումների ու հարցադրումների հնարավորություն են ընձեռում:

Թուրքիայի պատմությանը առնչվող հարցերը հուշարձանում ներկայացվում են հիմնական երկու եղանակով, մեկը՝ Քյոթահիա քաղաքի անցքերը նկարագրելիս, մյուսը՝ ներպետական և արտաքին քաղաքական խոշոր իրադարձությունները ներկայացնելիս: Դրանք մեծ մասամբ արտացոլված են «Ճառերի» հատվածում և գերազանցապես վերաբերում են XVII դ. կեսի - XVIII դ. առաջին երեսնամյակի իրադարձություններին:

XVII դարի կեսերի դեպքերից առավել ուշադրության է արժանի Նալեպի կառավարիչ Աբազա Նասան փաշայի ապստամբությունը: Դժգոհ մնալով Քյոփրուլու Մեհմեդ փաշայի մեծ վեզիրության տարիներին (1656-1661) ավանդական ռազմավատատիրական հարաբերությունների՝ պայմանական զինծառայության և հողօգտագործման ձևերի պահպանմանն ուղղված կտրուկ ձեռնարկումներից, Աբազա Նասան փաշայի գլխավորությամբ մի քանի կառավարիչներ դիմել էին վճռական գործողությունների և առաջխաղացման իրենց ճանապարհին անցել նաև Քյոթահիայի միջով. «Եւ այլ բազում գորս ժողովելով՝ եկն աստ ի Քոթահիու քաղաքս եւ նստաւ. Թ. (9) օր»: Զաղաքում գտնվելիս «էր թիւ հեծելին Տ.Ռ. (70.000) աւելի կամ պակաս», սակայն հետագայում «աւելուց մինչն Ճ.Ռ. (100.000) կամ ՃԾՌ. (150.000), քանզի ժողովեաց զամենայն փաշայքն ի գլուխ իր»: Աղբյուրի հաղորդած ապստամբների թվական կրկնաձի փաստումը հակակառավարական տրամադրությունների արագ աճի խոսուելն վկայություն է:

XVII դարի երկրորդ կեսին, «Երեսնամյա պատերազմի» ավարտման հետևանքով, եվրոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Լեհաստանի և Ավստրիայի վերստին «Արևելյան հարցի» շուրջ ռազմաքաղաքական հետաքրքրությունների թուլացումը մեր հուշարձանի վկայմամբ նկատելիորեն ազդում է Օսմանյան կայսրության ներքին քաղաքականության վրա: Մասնավորապես՝ «Այս վերոյգրեալ վեզիրն եւ շէյխ իսլամն յոյժ քաղցրացան ի վերայ քրիստոնէից՝ մինչ զի Ռ. (1000) եկեղեցոյ եւ կամ թէ վանօրէից աւելի եւ ոչ պակաս ֆէրման ետուր նորոգելոյ, որ ապականեալ եւ գայգայեալ էր բազում տեղիս ի անօրինաց ձեռացն»: Ներկայացվող ձեռնարկման դրդապատճառը, անշուշտ, ոչ այնքան քրիստոնյա հպատակների նկատմամբ ունեցած նորահայտ «կարեկցանքն» ու «գթասիրությունն» է, որքան եվրոպական այդ պետությունների հակաթուրքական տրամադրությունների մեղմումը:

Տեղեկությունների հաջորդ խուսրոք վերաբերում է կայսրության XVIII դարի սկզբի պատմության հարցերին: Քանի որ հուշարձանի «հիմնական վերանորոգողը» Անտոն Կուտինացին տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների անմիջական ակնադատն ու վկան է, դեպքերի շարադրանքը կրում է ավելի հանգամանալի բնույթ:

Սուլթան Ահմեդ III-ի գահակալման հետ կապված «Ադրիանապոլսի միջադեպ» կոչվող անցքերն արձանգրելուց հետո, հեղինակն անցնում է 1710-1713 թթ. ռուս-թուրքական պատերազմական գործողությունների քննարկմանը: 1709 թ. հունիսի 27-ին Պոլտավայում ռուսական բանակից շվեդների կրած պարտությունից հետո, թագավոր Կարլուս XII-ի և գետման Մազեպայի գլխավորությամբ գորայիների մի խմբի Օսմանյան կայսրության տարածք փախչելու և ապաստան գտնելու հանգամանքը իր որոշակի կնիքը դրեց ռուս-թուրքական փոխհարաբերությունների զարգացման հետագա ողջ ընթացքի վրա: «Նիշտակարանի» վկայմամբ սկզբնական շրջանում թուրքական իշխանությունները ապաստանյալների նկատմամբ բռնել էին խիստ հովանավորչական կեցվածք, նշելով «թե՛ որովհետեւ անկար երկիրն մեր, պարտիմք եւ մեք անկելոյն ձեռնտու լի-

նել»: Կայսրությունում Կարլուս XII-ի մնալու խնդրի շուրջ առաջ եկած անհամաձայնությունները դարձան դիվանագիտական առանձին քննարկման առարկա: Սուլթանը Ռուսաստանից «վասն այլոց իրաց» եկած դեսպանորդին «իրիձա է արեր, ասելով՝ իմ խաթերս համար սորա ձամբայ տաս, որ երդայ իւր երկիրն», իսկ Ռուսաստանը պահանջել է «իմ թշնամին իմ ձեռս տուր»: Ի վերջո, 1710 թ. նոյեմբերի 10-ին Օսմանյան կայսրությունը, եվրոպական տերությունների հրահրմամբ և դրդմամբ, պատերազմ հայտարարեց Ռուսաստանին:

Սկսված պատերազմում ռուսական կողմը որոշակի հույսեր էր կապում նաև թուրքական բռնակալության ճնշման տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների բարձրացվելիք ազգային-ազատագրական շարժումների հետ: Դեռևս մինչև ռազմական գործողությունների սկսվելը, մոտալուտ պատերազմում ցուցաբերվելիք խոստացված օգնության հնարավորության չափերը ճշտելու նպատակով, Ռուսաստանը բանակցությունների մեջ էր մտել Մուղադիայի գոսպոդար Դմիտրի Կանտեմիրի և Վալախիայի վոյեվոդա Կոստանդին Բռանկովիչի հետ:

Վերոհիշյալ անցքերի ընթացքը ներկայացնող հատվածի ադրյուրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ ռուս-թուրքական պատերազմի հրահրման գործում Վալախիայի վոյեվոդան ունեցել է իր գործուն մասնակցությունն ու ներգործությունը: Ըստ ադրյուրի, «Ուլահ պեկն» է, որ ռուսական ցարին հատուկ «գիր է ուղարկեր», որով տեղեկացրել է նրան «թե՛ Օսմանցին անգօր է, գաս որ միաուրինք եւ երդեալ Ստամպոլն առնուք»: Կոստանդին Բռանկովիչի այս նախաձեռնության լուրը շուտով հասնում է նաև սուլթանին, և նա «առ ժամայն գրեաց հրովարտաք Ուլահ պեկին եւ բերեալ Դ. որդովք եւ Բ. փեսօքն հանդերձ կանամք եւ եդ ի բանտի»: Մի քանի տարի անց, երբ սուլթանը Մորեայի դեմ նոր արշավանքի էր նախապատրաստվում, «թվին ՌՃԿԴ (1715) եւ գլխատեց [Ուլահ] պեկն Դ. որդօք եւ կանայք նոցա եւ թոռն մի Ը. տարվան Բ. փեսայ հետ սուրկուն արարին մեր Քոթահիու բերդին»: Քոթահիայի բերդում նրանց գտնվելու փաստի հաղորդումն էլ հասկանալի է դարձնում հեղինակի այդչափ մանրամասնու-

թյունների իմացության աղբյուրը, մանավանդ որ՝ «նոքա եկեալ պատմեցին ստոյքս»:

Պատերազմի ծագման պատճառներից բացի, սկզբնաղբյուրն անդրադառնում է նաև ռազմական գործողությունների ընթացքին, մասնավորապես ռուսական բանակի անհաջողություններին. «այնչափ պարտեցան, որ մէկ օրն տասն դալե ետուն հանդերձ պատերազմի գնացող խառնովն ԼԶՌ. (1306) քէսէ այս յայտնի եւ համարձագ թագաւորին, թող թէ անյայտ եւ ծածուկ վէզիրին եւ այլ նախարարաց եւ պարօնաց»:

Ռուս-թուրքական պատերազմում ձեռք բերված հաջողություններից ոգևորված և ի հատուցումն Եվրոպայում կորցրած տարածքների, 1715 թ. մեծ եպարքոս Դամադ Ալի փաշայի գլխավորությամբ թուրքական բանակը նոր գորարշավ է կազմակերպում Մորեայի վրա: Տայ հիշատակագիրը, հարագատմալուծ պատճառաբանման քրիստոնեական իր սկզբունքներին, կատարվածի համար մեղքերի զգալի բաժինը բարդում է իր հավատակիցների վրա, բայց և միաժամանակ հաղորդում հետազոտողի ուշադրությանն արժանի իրողություններ, որպիսին է 1690 թ. Վենետիկի կողմից Մորեայի զավթումից հետո տեղի մահմեդականների զանգվածային կրոնադարձության փաստը. «Եւ Տաճկաց բազուսք ի միջոյ սոցայ ելեալք՝ ցրուեցան ի] երկիրն Օսմանցոց, եւ այլք յուրովք Տաճկաց անդ մնացեալք դարձան եւ եղեն քրիստոնեայք»: Եղելությունը, ի դեպ, ոչ այնքան պարտադրանք էր, որքան կենցաղային գետնի վրա կատարված սերտաձուլ, քանզի «առնէին խնամութիւն ի միջի իրեանց՝ տալով դստերս իրեանց յուստերաց քրիստոնէից եւ առնելով դստերս քրիստոնէից յուստերաց իրեանց»: Ընդ որում, «եւ շատ ուլամէք եւ կանանչագլուխք մկրտեցան», իսկ «ռամիկք գնոսա տեսանելով, ամենեքեան դարձան եւ եղեն քրիստոնեայք»:

Օսմանյան կայսրության պատմությանն առավել հատկորոշ է քրիստոնյա հպատակների մահմեդականացումը, մինչդեռ այստեղ ունենք իր տեսակի մեջ գրեթե եզակի մի վկայություն:

«Տիշատակարանում» արժարժվում է նաև 1716-1718 թթ. թուրք-ավստրիական պատերազմը: Դամադ Ալի փաշայի գլխա-

վորությամբ դեպի Վերեդինի դաշտ շարժված թուրքական բանակը ռազմական գործողությունների առաջին իսկ օրից մատնվեց անհաջողությունների՝ 1716 թ. օգոստոսի 5-ին թուրքերը Պետրովարադինի մոտ ծանր պարտություն կրեցին:

Ջարդված զորամասերի նահանջը բարենպաստ պայմաններ ստեղծեց հակառակորդի ռազմական ուժերի առաջխաղացման համար: Պետրովարադինի դեպքերից երեք շաբաթ անց՝ 1716 թ. օգոստոսի 25-ին արքայազն Օժյենի զորքերն արդեն կանգնած էին Տիմիշոարի մոտ, որի գրավումը դժվար էր ինչպես «Դ. (4) դիմացն տղմուտ լինելու», այնպես էլ պաշտպանության լավ կազմակերպվածության պատճառով: Պաշտպաններին օգնության հասած թուրքական ուժերը չկարողացան վճռորոշ դեր խաղալ և շուտով այն հանձնեցին թշնամուն, որն «այնքան խնամք արաւ, մինչ զի բերթի միջէն ելեալ Տաճիկներուն տունն եւ այլ գահն որ մնալու էր՝ զամէնն ստակով գնեց եւ իւրեանք սիրով ի մէջ Օսմանցոցն ուղեւորեց»:

Քաղաքը թողնելուց հետո հաստատված ժամանակավոր զինադադարը թուրքերն օգտագործում էին նոր հարձակաման նախապատրաստություններ տեսնելու համար. «Եւ թագաւորն (սուլթան Ահմեդ III - Ս. Ս.) բացեալ զխազինէն սկսաւ նոր պատրաստութիւն տեսնել մի քստ միոջէ, զերէ քուլլի մնաց Նէմսէի մէջ, եւ սկսան թոփ շինեսնել եւ այլ ինչ եւ իցէ: Ի Պաղտատէն մինչէն Ուսկուտար զամէն քաղաքէն առաջվի դուլէն զառ նոր սերսէն կեշտի գրելու»:

Վերսկսված պատերազմում թուրքական բանակը նորից անհաջողության մատնվեց և պատասպարվեց Բելգրադի ամրոցում: Քաղաքի պաշտպանությունը կազմակերպող «Բ. մեծամեծ պարօնք», տեսնելով ստեղծված իրավիճակի անելանելիությունը, «խորհեցան տալ վերով, որ եղու իսկ եւ առեալ զիւր գօրսն ՃԽՌ. (1140) ընտիր զինուորօք սիրով եւ խաղաղութեամբ եկին ի միջի Օսմանցոց»:

Բելգրադի անկմամբ, սակայն, ռազմական գործողությունները չավարտվեցին «զի Օսմանցոց բանակն Բ. էր»: Ռեջեք փաշայի գլխավորած երկրորդ բանակը որոշակի նպատակ ուներ՝ «յախթեն գքրիստոնեայս եւ աւար առնուին զինչս եւ գստացուածս եւ տիրեն այս կողմ»:

բավականաչափ խորանալ թշնամու թիկունք՝ «Ժ. դոնախ առաջ Նեմսեի մեջն գնացեալ բանակեցան», սակայն գգալի կորուստների պատճառով ստիպված եղավ նահանջել՝ «այնչափ ահագին բանակն թողեալ գշարժուն եւ զանշարժուն միայն զհոգիսն ազատելոյ»:

1716-1718 թթ. պատերազմի արդյունքում Ավստրիան ստացավ Վառնան «հանդերձ դիմօք», Վալախիայի և Սերբիայի մի մասը՝ Բելգրադի հետ միասին, Տիմիշոարն ու Նյուսիսային Բուսնիան:

Արտաքին քաղաքական խնդիրներից բացի, «Տիշտակարանի» բովանդակված տեղեկությունների մի ամբողջ շարք վերաբերում է ներպետական անցքերի արժարժմանն ու նկարագրմանը: Այդպիսիներից է, օրինակ, 1730 թ. Պատրոնա Խալիի ապստամբության պատմությունը: Տեղինակի նկարագրմամբ ամեն ինչ սկսվեց «ի Ստամպոլ», երբ «ի պետեպետն կողմանե՛» «յանկարծակի երեւեցան քանի մի գորպայթ», որոնք սկզբում «էին իբր Ի (20) հոգիք», բայց «սակաւ առ սակաւ ժողովեցան եւ բազմացան», և «հարին վրան ի էթ մեյտանին եւ նստան»: Սկզբնական շրջանում ապստամբների դժգոհություններն ուղղված էին ոչ այնքան սուլթանի, որքան նրա մերձավոր մի քանի պետական այրերի դեմ. «ի թագաւորէս մերմէ շնորհակալ եմք, բայց Գ (3) ոմն խնդրեմք ի նմանէ՛ վեզիրն, վեզիր քեահեասին եւ դափթան փաշայն: Ջայս Գ մարդս տա մեզ բարւոք»: Այս լուրը խիստ ահաբեկեց սուլթանին, «որ գտանէր ի Պէշիքտաշ»՝ «գոյն յերեսաց նորա փախեաւ եւ երիդացան շրթունք նորա»:

Սկզբնաղբյուրի վկայմամբ մեծ եպարքոսն ավելի վճռականորեն էր օրամարդաված, սակայն դեպքերի հետագա ընթացքը պայմանավորվեց սուլթանի ավագ որդու դիրքորոշմամբ: Սուլթանը զիջող գտնվեց ինչպես ապստամբների պահանջներին՝ (հրամայեց «տալ ընդ հայցուածոց նոցա»), այնպես էլ դատապարտյալների խնդրանքներին՝ (նախ «խեղդեցին գնուս չուանաւ», ապա «եսուուն ի ձեռս թշնամեաց»):

Տուշարձանի առանձին հատվածներ հետազոտողին են ներկայացնում Զյոթահիա (Կուտինա) քաղաքին բաժին ընկած բնական աղետների, հրդեհների ողջ պատկերը, հասցված

վնասների ու կորուստների իրական չափերը: Աղբյուրից տեղեկանում ենք, որ XVIII դ. վերջին՝ «թվին ՌՃԽԳ» (1694) և «թվին ՌՃԽԴ» (1695) երկու անգամ քաղաքը գրեթե ամբողջովին այրվել է: Տաղորդվող նյութերից պարզվում է նաև հրդեհի առաջացման հիմնական աղբյուրը՝ «վերի շուկայի դարբնոցնին»:

Քաղաքը հերթական հրդեհի ճարակ դարձավ 1714 թ. ապրիլի 11-ի գիշերը: Այս անգամ հրդեհի վնասներն ավելի մեծ չափերի էին հասնում, մինչ այդ «ոչ է եղեալ այնպիսի գարհուրելի հրկիզութիւն»: «Քիթիկի» սուլյն հիշատակությունը ենթադրել է տալիս, որ թեքեջիլեր և Սաքհանե սզկիթների վերաշինության անհրաժեշտությունը թելադրված է եղել հենց վերոհիշյալ հրդեհով:

«Տիշտակարանում» ուշագրավ տեղեկություններ կան նաև XVIII դարի առաջին քարոքում Սեֆյան Պարսկաստանում աֆղան գիլգայներ Միր Վեյսի և Միր Մահմուդի գերիշխանության հաստատման փորձի հետ կապված անցուդարձերի մասին:

#### Ամփոփում

Ատենախոսության ավարտամասում համառոտակի ընդգծվում է հուշարձանի աղբյուրագիտակն կարևորությունը, նշվում են նրա առանձնահատկությունները, ի մի բերվում հետազոտության մեջ կատարված դիտարկումներն ու որակումները:

Իբրև հավելված ներկայացվում է «Քիթիկի» բնագրի ռուսերեն թարգմանությունը:

#### Տեսագոտվող թեմայով կատարված գիտական հրատարակումները

- 1) Միջնադարյան Թուրքիայի պատմության մի շարք հարցերի արտացոլումը Զյոթահիայի և Աստվածածին եկեղեցու «Տիշտակարանում», «Պատմա-բանասիրական հանդես», 1997, № 1, էջ 203-214:

- 2) Բյուրահիայում գաղթահայություն բնակեցման ժամանակի խնդիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, № 1: Տպագրության մեջ է:
- 3) Բյուրահիայի ս. Աստվածածին եկեղեցու «Տիշտակարանը» կազմող հեղինակների հարցը, Երիտասարդ Արևելագետների Տանրապետական 17-րդ գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզեր, Երևան, 1996, էջ 13-14:

С. П. МУРАДЯН

СИНОДИК ЦЕРКВИ СВ. БОГОРОДИЦЫ КЮТАХЬИ КАК ИСТОЧНИК  
ПО ИСТОРИИ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ГОРОДА  
И ОСМАНСКОЙ ИМПЕРИИ XV-XVIII ВВ.

(РЕЗЮМЕ)

На рубеже XV-XVIII столетий история армянской средневековой книжности пополнилась еще одним образцом летописаний, получивших в научной литературе наименование Синодики. Являясь как правило цельным изложением не единственного автора и выходя за хронологические рамки одной эпохи, новоявленные памятники выделялись своим содержанием, языком повествования и, главное, конкретностью изложенных сведений. Таким является и Синодик церкви св. Богородицы Кютахьи.

Он содержит ценнейшие материалы по истории армянской общины Кютахьи, т. к. имеющиеся в нем записи отражают этапы формирования общины, организацию внутриобщинных форм самоуправления, а также межэтнические отношения, степень и рамки ее социально-экономической и духовно-культурной жизни. Научно-критический анализ имеющихся сведений, с учетом данных иных источников, в том числе и турецких, позволяет представить место и положение христианской церкви и общины в Османской империи, характер, пути и методы их взаимоотношений.

Кроме истории армянской общины Кютахьи, Синодик содержит исключительно богатый материал и по внутри- и внешнеполитической истории самой средневековой Османской империи. Непредвзятый анализ и сравнительно-сопоставительное исследование новых для истории Турции материалов в ряде случаев способствует новому и более полному осмыслению отдельных событий и периодов истории страны.

Диссертация представлена на  
соискание ученой степени  
кандидата исторических наук

S. P. MOURADIAN

THE KOUTANIYA ST. ASTVATSATSIN CHURCH "SYNODICON"  
AS A HISTORICAL SOURCE OF THE ARMENIAN COMMUNITY  
AND THE OTTOMAN EMPIRE OF THE XV-XVIII CENTURIES

